

25.564

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

333.3  
Հ-11

# ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

—

ՅԵՐԵՎԱՆ - 1927

15 JAN 2010

09 709, 2013

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

333.3

3-11  
4.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1003  
15/2  
11



ՅԵՐԵՎԱՆ - 1927

25.564

## Հ Ր Ա Կ Ա Ն Գ Ն Ե Ր

ՆԵՐՔԻՆ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ  
1927 թ. ՀՆԹԱՑՔՈՒՄ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողժողկոմատի վորոշմամբ ընթացիկ 1927 թվին պետք է անպայման ավարտվին ներքին հողաբաժանության աշխատանքներն այն բոլոր գյուղերում, վորտեղ արդպիսին կատարվելու յե հողկոմների ու չափրարների սիջոցով:

Այս կարևոր վորոշումը ժամանակին ու հաջող իրազործելու համար առաջարկվում ե աշխատանքները տանել հետեւյալ կարգով:

ա) Չափրարի ու հողկոմի քննություն

1. Գյուղ ուղարկվող չափրարին ընտրել մեծ զգուշությամբ: Բոլոր գյուղերին բավարարելու չափով գավառում հարմար թեկնածու չունենալու գեպքում փորձված ու գործին հմուտ չափրարներ պահանջել Հողվարչությունից: Չափրարին գյուղ ուղարկելուց առաջ անպայման պայմանագիր կնքել վոր նա իրավունք չունի աշ-

Գրառեպար № 116դ.

Տիրաժ 1000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—320

խատանքից հեռանալու, քանի չի ավարտել հողաբաժանությունը, նոր հողային մատրանը չի հանձնել գավհողբաժնին և վերջինիս ու հասարակության կողմից հողաբաժանությունը չի հաստատվել:

2. Հողաբաժանություն կատարվող բոլոր գյուղերում ընտրել տալ նոր հողային կոմիտե, վորի անդամները պիտի լինեն գյուղխորհրդի նախագահը (նախագահ նաև հողկոմի) և յերկու չքափոր ու միջակ գյուղացի՝ հասարակության հողերին լավ ծանոթ, կարող, բարեխիղճ, մաքուր ու վստահելի աշխատավոր հողոգտագործողներից։ Զպետք ե հաստատել հողկոմի կազմը և հողաբաժանության ձեռնարկել, յերբ ընտրված են կուլտակներ ու անբարեխիղճ կամ անկարող անդամներ։

բ) Բաշխվող հողերի ցուցակագրությունը,  
չափելն ու վորակավորումը

3. Հաջող չափրար և լավ հողկոմ ունենալուց հետո նրանց միջոցով ամենից առաջ պետք ե կազմել ամբողջ գյուղի բաշխման յենթակա հողերի ցուցակն ըստ հողակտորների (սառնակամ հանդ): Այս գեպքում արոտների ամբողջական շրջանում ընկած հատ ու կենտ և փոքրատարած վարելահողերն ու խոտհարքները

չպետք ե բցել բաշխվող հողերի ցուցակի մեջ, վորպեսզի գյուղի նախիրն ու անասունները արոտներից անարգել ու անվնաս ոգտվել կարողանան:

4. Վոչ մի դեպքում չի թույլատրվում արոտները բաշխել ծխերի վրա։ Արոտները մնում են ամբողջ համայնքի ոգտագործության տակ։

Զի թույլատրվում նաև մշակության հարմար ու պիտանի հողերի թափելը, մանավանդ վոր թափված հողերը մինչև նոր հողաբաժանությունը վոչ վոք իրավունք չունի մշակելու։ Թափված հողերը դառնում են արոտ և մնում են ամբողջ համայնքի ոգտագործության տակ։

Զի թույլատրվում ցուցակի մեջ մուծել այն հողամասերը, վորոնց մասին չուծված վեճ ունի անտառապետությունը։

5. Բաշխվող բոլոր հողերի ցուցակն ըստ հողակտորների (սառնա, հանդ) կազմելուց հետո չափրարը պետք ե գուրս գա գաշտ, բոլոր հողամասերը զատ-զատ չափի և հողկոմի անդամների հետ խորհրդակցելով՝ արձանագրի այդ հողամասերի վորակը՝ կատեզորիան։

**Մանրություն.** Վարելահողերի համար սահմանվում ե մինչև յերեք կատեզորիա, իսկ խոտհարքների՝ յերկու կատեզորիա։

6. Զափրարը պետք ե առանց շտապելու և

անսխալ տաճի չափրարության գործը, հակառակ դեպքում նա կզրկվի աշխատավարձ ստանալու իրավունքից և դատի կհանձնվի:

7. Հողկոմի անդամները պարտավոր են ճշտությամբ վորոշել հողամասերի կատեգորիան, վորոշետես այդ աշխատանքից և կախված հողաբաժանության լիակատար հաջողությունը:

8. Բոլոր հողամասերի ցուցակը կազմելուց և չափն ու կատեգորիան վորոշելուց հետո, չափրարը հողկոմի հետ միասին գավհողբաժնի լիազորի ներկայությամբ պետք է գումարի հասարական ընդհանուր ժողով և մանրամասն գեկուցի տարրած աշխատանքների մասին: Ընդհանուր ժողովը պիտի հաստատի հողամասերի կատեգորիաները, մտցնելով անհրաժեշտ փոփոխությունները:

9. Ընդհանուր ժողովը պետք է առանձնապես նախազգուշացվի, վոր հողաբաժանության ժամանակ ծխերի ունեցած հողերը փոփոխության կենթարկվեն; ուստի անհրաժեշտ և շատ մեծ զգուշությամբ, բարեխղճությամբ ու ճշտությամբ վորոշել գեռ բաշխման չենթարկված հողերի կատեգորիաները:

10. Ընդհանուր ժողովի կողմից արձանագրությամբ ու ժողովականների ստորագրությամբ հաստատված ցուցակներն ու կատեգորիաները

ձանաչվում են վերջնական և նրանցով անշեղ դեկավարվում են չափրարն ու հողկոմը՝ հողաբաժանության հետագա աշխատանքները տանելիս:

11. Ընդհանուր ժողովի վերջնական հաստատությունն ստանալուց հետո չափրարը պետք է հաշվի առնի, արձանագրի ու հայտարարի հասարակությանը և ուղարկի հողբաժնին, թե ամեն մի կատեգորիայից և ընդամենը վորքան բաշխվող հող ունի հասարակությունը:

գ) Աշխատավոր հողոգտագործողների ցուցակագրություն

12. Նախորդ հոդվածներում պահանջվող աշխատանքները ճշտությամբ տանելուց հետո, չափրարը հողկոմի հետ միասին պիտի ստուգի գյուղի ծխամատյանը և կազմի հասարակության մեջ հողի իրավունք ունեցող բոլոր ծխերի և նրանց անդամների թվի առանձին ցուցակ:

13. Ծխերի և նրանց անդամների ցուցակագրության ժամանակ չի թույլատրվում բաժանելմանը ծխերի կազմը: Բաժանվել ցանկացողները պետք է այդ կատարեն հողաբաժանությունն ավարտելուց հետո:

14. Ամեն մի գյուղում սահմանված նորմայից ավելի հող ունենալու դեպքում հողոգտագործողների ցուցակի մեջ պետք է մուծել վերաբնակիչ-

ներին, վորոնք բնիկներին համահավասար պայման-ներով պետք ե բավարարվեն բակով ու հողով:

**Թանօթություն.** Խ. Հայաստանի ներկա սահմաններում գյուղ ունեցող վերաբնակիչները կարող են նոր վայրում հող ստանալ միայն զավ-հողբաժնի հատուկ թույլտվությամբ:

15. Հողոգտագործողների լրիվ ցուցակ կազմելու աշխատանքները մինչև 150 ծուխ ունեցող գյուղում կարող են առել 3 որ, իսկ ավելի մեծ գյուղերում՝ 7 որ։ Այդ ժամանակաշրջանում բոլոր ծխերի լիազորներին պետք ե կանչել, հայտարարել իրենց ծխի անդամների ճիշտ թիվը և սխաներ լինելու գեպըում ուղղել:

16. Ծխերի և չնչերի ցուցակը պետք ե ներկայացնել հասարակության ընդհանուր ժողովի հաստատությանը։

17. Աշխատավոր հողոգտագործողների ցուցակի մեջ հողկոմն ու հասարակությունը չպետք ե մտցնեն հետեւյալ դասի ընտանիքներին ու անձերին։

ա) Ովքեր ծխի ամբողջ կազմով կամ բաժան մասով ուրիշ վայր են տեղափոխվել (Հողային Որենսգիրք, հողվ. 20).

բ) Ովքեր 1921 թվից շարունակ բացակայում են գյուղից։

գ) Ովքեր վեց տարի շարունակ հողը

վարձու յեն տվել և իրենք չեն մշակել այս։

**Թանօթություն.** Բացառություն կարող ե լինել գավգործկոմի գիտությամբ ու հատուկ թույլտվությամբ միայն այնպիսի ծխերի համար, վորոնք հողից ու հողագործությունից զատ ին-կամուտի ուրիշ աղբյուր չունեն։

դ) Ովքեր ծխի մեջ ապրում են իբրև 2-րդ կամ 3-րդ կին-ամուսին։

յե) Ովքեր աշխատավոր ձեռք ու միջոցներ ունեն, բայց հողը վարձով են տալիս։

զ) Ովքեր ծխի յեկամուտի մեծ մասն ստանում են առետուրից կամ այլ անաշխատ վաստակից։

18. Աշխատավոր հողոգտագործողների ցուցակը կազմելու ժամանակ դժվարությունների ու բարդությունների հանդիպելու դեպքում շափրարն ու հողկոմը պետք ե շտապ կարգադրություն, լուսաբանություն ու աջակցություն խնդրեն գավհողբաժնից։

19. Աշխատավոր հողոգտագործողների վերջնական ցուցակը կազմելուց հետո չափրարը հողկոմի հետ միասին պետք ե հաշվի առնի, արձանագրի, ուղարկի գավհողբաժնին և հայտարարի հասարակության նույն ընդհանուր ժողովում, թե հասարակության ամեն մի անդամին (շնչին) յուրաքանչյուր կատեգորիայից վորքան հող ե ընկնելու հողաբաժանության ժամանակ։

**Թաճոքություն.** 19-րդ կետում մատնաշնչված աշխատանքն ավարտելուց հետո հողկոմը միջակ և ունեոր ծխերից լիովին գանձում ե հողաբաժանության ծախսերը փակելու համար պահանջվող վճարը:

20. Ամուսնության, վախճանվելու, ծնվելու և ուրիշ պատճառով աշխատավոր հողոգտագործողների ցուցակի մեջ վոչ մի փոփոխություն չի կարող կատարվել այն որից սկսած, յերբ ընդհանուր ժողովի կողմից հաստատված ե վերջնական ցուցակը և հաշվի առնելուց հետո հայտարարված ե, թե ամեն մի շնչին վնարքան հող ե ընկնելու հողաբաժանության ժամանակ:

գ) Բակերի (տնատեղ) չափը, ենդագրությունն ու բաժանություններ

21. Հողամասերի կատեգորիան հաստատող ընդհանուր ժողովը, յուրաքանչյուր շնչին հասանելիք հողացին սորման պարզելուց հետո, պետք ե քննության առնի ու վորոշում կայացնի ծխերին հասանելիք բակերի նորմալ տարածության մասին:

22. Իբրև ընդհանուր կանոն ընդունված ե, վոր մեկ ծխի բակի չափը չպետք ե պակաս լինի 300 քառ. սաժենից:

**Թաճոքություն.** Բակի տարածությունը մըտնում է ծխին հասանելիք հողաբաժնի նորմալի մեջ:

23. Հասարակական ընդհանուր ժողովը բակերի չափը վորոշելուց հետո պետք ե քննության առնի ու արձանագրի, թե առողջապահական, ջրալին և այլ նկատառություններով գյուղի վոր կողմից անհրաժեշտ ե լնդարձակել բնակատեղերի շրջանը, վորպեսզի կարիքավորներին նոր բակեր հատկացվի:

24. Հասարակական ընդհանուր ժողովը կարող ե վորոշել յուր հողերի վրա բոլորովին նոր վայրում նոր գյուղ հիմնելու մասին: Այս գեպքում շափրարն ու հողկոմը պարուավոր են վորոշությունապ կարգով ներկայացնել գավգործկոմի հաստատության:

25. Բակերի չափն ու տեղադրությունը վորոշելուց հետո չափրարն ու հողկոմը գավհողբաժնի միջոցով վորոշում են գյուղի նոր շրջագծի հատակագծան հարմարություններն ու հնարավորությունները: Հատակագծման մասին դրական վորոշություն ստանալուց հետո զատում են բնակատեղերի արտաքին շրջագիծը և անցնում հանդի հողերի բաժանության գործին:

26. Գյուղի հատակագծումը մերժվելու դեպքում, չափրարն ու հողկոմը դաշտի հողերի բաժանությունից առաջ կատարում են բակերի բաժանություն՝ հատկացնելով յուրաքանչյուր ծխին մեկ բակ:

**Թաճորություն.** ա) Ութ և ավելի անդամ ունեցող ծխերին հատկացվում է բակերի համար ընդունված յերկու նորմա միատեղ, իսկ յեթե հարմարություն չկա՝ յերկու տեղում:

բ) Յերկու բակ ունեցող ծուխն ընտրում է նրանցից մեկը, իսկ յերկրորդ բակը յենթակա յենթաման և ստացողը պիտի վճարի նրա վրա վրա յեղած արժեքների գինը:

27. Նորմայից ավելի տարածություն ունեցող բակերն անփոփոխ մնում են նախկին ոգտագործողներին, յեթե ավելի տարածությունն նպատակահարմար սահմաններում զատելու և հարկանի բակին միացնելու հրամայական պահանջ ու իրական տվյալներ չկան:

28. Չի թույլատրվում կրճատման յենթարկել այն բակերը, վորոնք պարսպած ու ծառատունկերով պատաժ ամբողջություն են ներկայացնում:

29. Բակ չունեցող ծխերին նորմայի չափով հող հատկացվում է նոր բնակատեղերի շրջագծում, թողնելով այնտեղ լայն և ուղիղ փողոցներ ըստ տեղական հարմարությունների:

30. Անհարմար ու փոքր բակ ունեցող ծխերին նոր բնակատեղի շրջանում նորմայի չափով հող հատկացվում է՝ ըստ իրենց պահանջի:

**Թաճորություն.** Այս գեպօրում ծուխը պարտավորություն պիտի հանձն առնի յերեք տարվա ընթացքում հաստատվել նոր տեղում և հին բակի

հողը թողնել հասարակության տրամադրության տակ, ըստ հարմարության հարկան բակերին միացնելու համար:

31. Զավթարն ու հողկոմը բակերի բաշխման ժամանակ պարտավոր են հարմար տեղեր հատկացնել նաև հասարակական շենքերի համար (դպրոց, գյուղխորհուրդ, կոոպերատիվ և այլն), ստանալով այդ առթիվ ցուցմունքներ հասարակության ընդհանուր ժողովից ու համապատասխան մարմիններից (լուսբաժին, շրջգործկոմ և այլն):

32. Վերոհիշյալ հողվածներում մատնանշված կարգով ծխերին բակերով բավարարելուց հետո չափրարը կազմում է ծխերի բակերի ցուցակ և արձանագրում՝ թե դուրս գալով բակերի տարածությունը, ծխերին վճրված հող պետք է հատկացվի դաշտում:

33. Ծխերին հասանելիք հողերի քանակը վորոշելիս պետք է նկատի ունենալ, վոր մեկ անդամ ունեցող ծխերը բավարարվում են 2-շնչի համար սահմանված նորմայով, իսկ յերկուսը՝ 3. շնչի:

#### բ) Հողբաժանություն

34. Անցնելով բուն հողաբաժանության գործին չափրարն ու հողկոմը պետք է բոլոր ծխերին բավարարեն դաշտի հողերով՝ գյուղում ընդուն-

ված նորմայի ու կատեգորիաների սահմաններում։ Այս դեպքում մինչև հողաբաժանությունը գոյություն ունեցող մանր ու անկանոն հողամասերը պետք ե այնպես միացվեն - ամբողջացվին, վոր կանոնավոր ձևի ու ճանապարհով ապահովված հողամասեր ստացվեն։

35. Յուրաքանչյուր ծխի պետք ե տալ այնքան հողամաս, քանի կատեգորիայի հող ե ճանաչված հասարակության դաշտում։ Այս պահանջը հիմք ընդունելով՝ մեկ ծխի համար 3 կտոր վարելահողից ու 2 կտոր խոտհարքից, ավելի հողացրվածությունը թուլատրելի չե։

**Ծանօթություն.** 1. 3 անդամ ունեցող ծխերին 3-րդ կարգի հող չպետք ե տալ, վորպեսզի հողամասերը շատ մանր ու ցրված չլինին։

36. Հողաբաժանության ժամանակ ծխերի իրավասության տակ պիտի թողնել նրանց այգիներն ու ծառաստանները։ Կատեգորիաների ու նորմաների սահմաններում ծառապատ հողերն ու առվույտի արտերն ել պիտի թողնել արժեքների տերերին։

37. Լքյալ ու տիրապուրկ այգիների ու ծառաստանների հողերը պետք ե հատկացնել ինամելու ընդունակ ծխերին և ստանալ հոգուտ Փոխոգկոմի վագերի ու ծառերի արժեքը։ Նույնը պետք ե անել նաև հողի իրավունքից զրկված-

ների այգիների ու ծառաստանների նկատմամբ, միայն թե այդ դեպքում արժեքները պիտի ստանան տերերը։

38. Այգիներից ու ծառաստաններից ազատ հողերի բաժանությունը պետք ե կատարել այնպես, վոր ըստ կատեգորիայի ու նորմայի մոտիկ հողերն ստանան չըստորները։

39. Հողերի բաժանության ժամանակ պետք ե դպրոցին անպայման հատկացնել հինգ (5) դեսյատին վարելահող մեկ կամ առավելն յերկու տեղում։

#### գ) Հողբաժանության հաստատությունը

40. Հողաբաժանությունն ավարտելուց հետո շափրարն ու հողկոմը աշխատանքների արդյունքների մասին զեկուցանում են հասարակության ընդհանուր ժողովին և հայտարարում ծխերին տրվելիք բակերի ու դաշտի հողերի իրենց ստորագրությամբ վավերացված ցուցակը։

41. Հասարակության ընդհանուր ժողովը վորոշումն ե հանում կատարված հողաբաժանության մասին, վոր արձանագրված ու ժողովականների ստորագրությամբ վավերացված ուղարկում ե գավգործկոմի մնորինության։

42. Կատարված հողաբաժանությունից ու հասարակության ընդհանուր ժողովի վորոշում-

ներից դժգոհ ծխերի լիազորներն իրավունք ունեն  
14 որվա ընթացքում փաստացի ու պատճառա-  
բանված բողոք ներկայացնելու գավործկոմին:

**Թանօրություն.** 14 որից հետո տրված  
բողոքները քննության չպետք ե առնվեն գավ-  
ործկոմի կողմից, ինթե խնդրատուն փաստացի  
կերպով չապացուցի, վոր բողոքի ուշացումը  
կատարվել ե հարգելի պատճառով (Հիվանդու-  
թյուն և այլն):

43. Գավործկոմը գավիռղբաժնի միջոցով  
տեղում ստուգում ու քննում ե չափրարի աշ-  
խատանքը, կատարված հողաբաժարությունն ու  
ստացված բողոքները և յուր վորուշոմն ե  
կայացնում հողաբաժանության հաստատության  
մասին:

44. Գավործկոմի կողմից հաստատված  
հողաբաժանությունը արձանագրվում ե նույն  
հողամատյանի մեջ, վոր ժապավիճվում ու կնքում  
ե և ուղարկվում գյուղխորհրդին անշեղ գործա-  
դրության ու ղեկավարության համար:

45. Գավործկոմի կողմից հողաբաժանու-  
թյունը վերջնականապես հաստատվելուց հետո  
չափրարը տեղում ցույց է տալիս նոր հողաբա-  
ժիններն այն բոլոր ծխերին, վորոնք չգիտեն կամ  
լավ ծանոթ չեն իրենց հողամասերի սահման-  
ներին:

46. Գավործկոմի կողմից հողաբաժանու-  
թյունը վերջնականապես հաստատվելուց հետո  
բոլոր ծխերին տրվում ե տեղեկանք նրանց ծխի  
անդամների ու ստացած հողերի սասին հետևյալ  
ձևով:

## ՔԱՂՎԱԾՔ

· · · · · գավառի · · · · գավառակի  
· · · · · հողհասարակության ծխամատյանից և  
հողամատյանից առ · · · 192 թ.

ՀՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ	ԾԽԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ	1003		ՀՈՂԵՐԻ ՄԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ	ՀԱՓ
		ԾԽԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ	ՀՈՂԵՐԻ ՄԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ		
Աղքանուն, անուն և հայ- րանուն տան զիկի և ծխի անդամների	ծխի թղթին և (տան զիկը և ծխի անդամների)	գլուխը, կինը և այլն)	Հողամասի անուններ Հողամասի անուններ Հողամասի անուններ	Հողամասի անուններ Հողամասի անուններ Հողամասի անուններ	Հողամասի անուններ

47. Գավործկոմի կողմից հաստատված ու  
կնքված հողային մատյանը իբրև հողոգտագործու-  
թյան հիմք ե ծառայում թե մասնավոր ծխերի  
և թե պետական-հասարակական հիմնարկու-  
թյունների համար:

48. Հաստատված ու կնքված հողային  
մատյանների մեջ վորեւե փոփոխություն կարելի  
յե կատարել (կարմիր թանաքով) միայն Հողժող-

կոմատի կամ Հողհանձնաժողովի վերջնական վորոշման հետևանքով:

**Մաճոբություն.** Սույն պահանջը խախտող ները կենթարկվեն դատական պատասխանատվության:


49. Հաստատված ու կնքված հողային մատյանի մեջ ցույց տված սահմանները խախտող հողոգտագործողները յենթակա յեն պատասխանատվության:

50. Հողաբաժանությունից հետո ծխերի մեջ չըաժանված հողերը համարվում են ազատ ֆոնդի հողեր, վարոնք մինչև նոր հողաբաժանությունը մնում են ամբողջ հասարակության տնօրինության տակ, յեթե հողորգաններն այդ հողերը չեն արածագրում հողազուրկ բնակչության:

51. Հասարակությունն ազատ ֆոնդի հողերի վրա կարող ե կազմակերպել ընդհանուր ցանքեր կամ զուղխորհրդի միջոցով այդ հողերը կարող ե տալ վարձակալության աշխատավոր հողոգտագործողներին, ստանալով նրանցից վարձագին հոգուտ հասարակական կարիքների:

Հողժողկոմ Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Հողվարդության պետ Խ. ԱՎԵԼԲԵԳՅԱՆ



7/1 1922

Ա. ԱՅԱՆԻ ԱՆԴՐԱ Ա. ԱՅԱՆԻ ԱՆԴՐԱ

ՀՀ Ազգային գրադարան



NL0209061

